փութաց անդր, և ժողովեալ զայլազգիս և զքրիստոնեայս դեղջն՝ հարցանէ ցնոսա զվիարդն, և նոքա ասեն. Այրն ուխտաւորեալ է Հայոց, Յունաց և Լատինաց և այլ ամենայն քրիստոնէից, և պատուի 'ի նոցանէ և աղօթեն անդ. եւ 'ի նախընթաց ամին մուծան սպասքս այսոքիկ եւ եդան յիւրաքանչիւր տեղիս, եւ փոխեցաւ դուռն։ Յայնժամ հրամայեաց դատաւորն Լատինաց հանել անտի արտաքս զամենայն կարասիս զոր մուծին. փակել զնոր դուռն եւ բանալ զհին, և թողուլ զԱյրն յառաջին վիճակի իւրում, ուխտաւորեալ ամենայն քրիստոնէից եւ մի՛ սեփհականել զայն և եթ ազգի միոյ, որ և արարին իսկ, ՌՌՁ (1776)։

Իսկ Զաքարիա Պատրիարք Կաղզվանցի, որ նստէր 'ի Կոստանդինուպոլիս, կամելով բառնալ զարտունջ միաբանաց եւ զդայթակղութիւն հասարակութեան, խորհրդով և հաճութեամբ գլխաւորաց ազգին գրեաց զեօթն գլուխս բանից իբր կանոն, վասն բարւոք կառավարութեան Աթոռոյն Երուսաղէմի, որ ունէր օրինակ զայս։

Մեծի արքայանիստ քաղաքիս Կոստանդինուպոլսոյ Պատրիարքս հանդերձ իշխանօք և գրեթէ համայն ազգօք, 'ի թուին Հայոց 1240 (1791) 'ի 23 Յունիս ամսոյ, 'ի միասին հաւաքեալ համախոհ և համակամ հաճութեամբ զայսոսիկ կանոնս հաստատեցաք վասն բարեկէս կառավարութեան Ս. Երուսաղէմի առ 'ի զերծուցանելոյ զսոյն Ս. Աթոռն 'ի բամբասանաց։

Նոքա՝ Պատրիարքն զվեց Նազիրս ունիցի ինքեան օգնական, որոց այժմ անուանքն են, Սարգիս եպիսկոպոս Կուղիկեան, Աւետիք եպիսկոպոս, Զաքարիա, Կարապետ, Պետրոս եպիսկոպոսունք, Մարտիրոս վարդապետ, և զամենայն ինչ ժողովեալ հաւաքեսցեն թէ 'ի դարպասական ողորմութենէ և թէ յայլոց. սոյն հարազատ գործակալքն՝ թուով և տումարաւ դիցեն յարկղն երկաթի, և զբանալին ինքեանք պահեսցեն, և մի տումար եւս Պատրիարքն ունիցի. երբ պիտոյ լիցի գործակալքն ըստ բաւականին հանցեն զդրամն 'ի մատակարարութիւն Ս. Տանն մինչ 'ի վերջ տարւոյն. և 'ի տարեգլխոյն մեծաւորն կոչեսցէ զգործակալսն և պահանջեսցէ 'ի նոցանէ զհաշիւ բոլոր տարւոյն, եւ նոքա տացեն։ Պատրիարքն նորեկ սպասաւոր